

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ

Cuique suum.

Ապրիլի 24-ին Մոսկուայում պիտի տօնուի մեր համակրելի բանաստեղծ Ալ. Մատուրեանի գրական գործունէութեան 25-ամեայ յօբելանսը։ Չարմանալի համեստ բնաւորութեամբ, Մատուրեանը նոյնչափ համեստ է իւր գրչով, իւր քնարով։ Մեծ ջանք էր հարկաւոր բարեկամների կողմից համոզելու նրան, որ չը հրաժարուի յօբելեանական տօնախմբութիւնից, որ դա նրա մասնաւոր գործը չէ, այլ հասարակութեան լիակատար իրաւունքն է տօնել, գնահատել կամ չը գնահատել իւր գործիչներին։ Արդէն ընտրուած է յատուկ յանձնաժողով, որը և պատրաստութիւններ է տեսնում յօբելեանի համար։

Ալ. Մատուրեանը ծնուել է Ջաքաթալայում 1864 թուին։ Նա աւարտել է տեղական քաղաքային դպրոցը և հէնց այդ պաշարով հանդէս եկել մեր գրականութեան մէջ։ Սակայն երկար տարիներ ապրելով Մոսկուայում, նա պարապել է ինքնակրթութեամբ և լրացրել դպրոցի պակասը։ Առաջին յօդուածը Մատուրեանը գրել է «Մեղուի» մէջ. այնուհետև նա երկար ժամանակ աշխատակցել է «Նոր-Դարին», «Մշակին», «Հանդէս Դրական և Պատմականին», «Աղբիւրին», «Մուրճին», «Крымскій Курьеръ»-ին և այլ բազմաթիւ հանդէսների ու լրագրների։

Առանձին գրքով լոյս են տեսել երեք հատոր նրա ինքնուրոյն բանաստեղծութիւնները և երկու հատոր թարգմանականները (մեծ մասամբ ռուս բանաստեղծներից). բացի այդ, նրա ինքնուրոյն բանաստեղծութիւններից շատերը թարգմանուած են ռուսերէն և լոյս են տեսել «Вестникъ Европа», «Дѣло», «Братская помощь» և այլ հանդէսների ու ժողովածուների մէջ։

Տալով Մատուրեանի գրական գործունէութեան curriculum vitae-ն և ամպագային թողնելով աւելի հանգամանօրէն խօսելու այդ վաստակաւոր, բայց համեստ գրականի մասին, մենք յոյս ենք տաւածում, որ հայ հասարակութիւնը, և մանաւանդ Մոսկուայի հայ հասարակութիւնը, որի մէջ երկար տարիներ ահա ապրում է բա-

նաստեղծը,—ըստ արժանւոյն կը գնահատէ ու կը վարձատրէ իւր մշակին գոնէ նրա յօբելանի օրը, իսկ վարձատրութեան, մանաւանդ նիւթական վարձատրութեան՝ Մատուրեանը ահագին կարիք ունի, իբրև մշտահիւանդ, ծիրուած, անապահով, (ինչպէս բոլոր հայ գրողները) հայ գործիչ: *Guique suum!*

Ն. Ս. ՅԷՐ-Մանուէլեան

Մոսկուա, 1910 թ. 3 ապրիլի.

ՅԱՐԳԵԼԻ ԽՄԲԱԳԻՐ

Այս նամակը, որ ուղարկուած լինելով «Նոր-Դպրոց» ամսագրին իբրև նոյն ամսագրի մէջ ինձ ուղղած նամակի պատասխան, և որը յիշեալ խմբագրութիւնը, չկտմենալով զիպչել իւր խմբագրի անձեռնմխելիութեան, բարեհաճեց ի ֆնաս մանկավարժութեան մէջ գիտութեան նոր հոսանքի՝ չտպազրել, խնդրեմ զետեղէք...

1910 թ. 3 Մայիսի

Թիֆլիս

ՊԱՏԱՍԽԱՆ Պ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻՆ

Ձեր խմբագրութեամբ լոյս տեսնող «Նոր Դպրոցի» ներկայ տարուայ № 3-ում մի նամակ էք ուղղել ինձ: Կարդացի Ձեր անգոր տողերը. Դուք փաստեր չունէք յօդուածիս որևէ կէտը նսեմացնելու: Դիտմամբ յօդուածիս սկիզբը չհասկանալու էք զրել, Բայց ինչ կայ անհասկանալի. իմ գործիքը տպանորդական սխտեմի է, Ձեր հաւանածը միաւորական սխտեմի, որի գործածութեան ֆնասակարութիւնը դեռ էք կարողանում գիտակցել: Այդպիսի տրամագրութիւն ունենալով՝ ինչպէս կարող էք իմ թուաբանական գործիքի նշանակութիւնը և դիրքը որոշել:

Յօդուածները իւղի յատկութիւնն ու չունին, որ մի պատառ վերցնելով՝ նրա արժէքը գնահատէք: Միամիտ ընթերցողին յօդուածիցս մի կէտ պօկած ցոյց տալով՝ ուզում էք հաւատացնել, որ ամբողջ յօդուածը սխալ է: Ընդհակառակը, Ձեր այդ վարմունքով ցոյց տուիք, որ անձեռնհաս էք լուրջ ու հիմնաւոր կերպով պատասխանել յօդուածիս գլխաւոր կէտերին:

Ձեր յօդուածից ուշադրութեան էի առել այս բառերը. «չորի, սիսիո... գծիկներ, շրջանակներ»... (սիսեո բառից յետոյ պէտք է լինէր բազմակէտ, չգիտեմ ինչո՞ւ տպագրութեան միջոցին դուրս է մնացել*)։ Դուք գննական միջոցների տեսակները համարելով առաջին տեսակի մէջ յիշել էիք լօբի և այլն. երկրորդ տեսակից՝

*) Նոր-Դպրոցի № 2-ում տպուած իմ յօդուածի մէջ առաջ են եկել հետեւեալ սխալները 71-րդ երեսում, 4-րդ տողում «անպատրաստէ» բառի տեղ պէտք է լինէր «պատրաստ է», 65-րդ երեսում «թաւաբանութեան մութ աշխարհն է» դրա տեղ պէտք է լինէր «թաւաբանութեան մութ հասկացողութեան աշխարհն է»: